

խիրները եւ տուար ու մարդ յափշտակելով կը լափէ եղեր. եւ որ վանքին վանահայրերէն միոյն հրաշիւքը քար կտրեր է. ցարդ ցոյց կու տան քարացեալ այդ մնացորդը, որ արդարեւ հսկայ վիշապի մը կը նմանի»:

Վանքին աւերման պատճառ կը ճանչնայ Աղեքսանդրեան (էջ 282—3) Բաթիկեան խելայեց Մկրտիչ շուշտակ վարդապետը, զոր Սեբաստիոյ Յակոբ Արքեպ. 1782ին Ս. Գէորդայ վանից տեղապահ դրած էր, որ իր խակ եւ խռովայոյզ բնաւորութեամբ գժտած՝ քանի մը տարիէն «գնաց Կ. Պօլիս, եւ չդարձաւ. եւ իր ընտանիքը գրաւեցին վանքը, կուտէին արդիւնքը եւ վանքին աւերման հոգ չէին տանիր»։ Եւ այսպէս նա պատճառ եղաւ աւերման «Ս. Գէորդայ վանաց, ինքն եւ ազգականք իւր»։ Ըստ նոյն Նաթանեանի (էջ 153) 1876—7ին նոյն գիւղ կը բնակէին 11 տուն հայ եւ 2 տուն հայ բողոքական:

Ըստ Լ. Յ. Տաշեանի հետազոտութեանց Սեբաստիոյ եւ շրջակայից վրայ (ձեռագիր), խնդրոյ նիւթ եղող տեղն հին յունական գիւղաքաղաք է, ուր ըստ Ուխտանէսի (Ժ. դարուն, Պատմ. Վաղարշապատ 1876, էջ 86) Գ. դարուն սկիզբը Լիւկիանոս կայսեր հալածանքին ժամանակ հաւատացեալք փախան ի մէջ այլոց՝ Սեբաստիոյ սահմանները՝ նաեւ Տիւրկնոց, որ «են զերծ տեղիք եւ հեռագոյն եւ ամբողջ», որ թերեւս սկզբնաւորութիւնն ըլլայ՝ ըստ իս՝ յիշեալ առասպելին: Տեղոյն անունն հետ-